ԿԱՐԾԻՔ

Լիանա Գագիկի Ավետիսյանի

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՆ ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԴԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐՈՒՄ Է.00.04

«Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ավետիսյան Լիանա Գագիկի ատենախոսությունը նվիրված է Ս. Ստեփանոս Նախավկայի պաշտամունքի համալիր ուսումնասիրությանը՝ որպես համաքրիստոնեական և միաժամանակ հայկական հոգևոր-մշակութային ինքնության մաս հանդիսացող կարևորագույն երևույթի: Թեման առավել քան արդիական է, քանի որ հայագիտության մեջ մինչ այժմ բացակայել է սրբի կերպարի աստվածաբանական, մատենագրական և ազգագրական շերտերի փոխառնչությունը համակողմանիորեն քննող հետազոտություն, ինչը բարեհաջող կերպով իրականացրել է ատենախոսը: Ատենախոսության՝ դավանաբանական և ժողովրդական-բանավոր ավանդույթների փոխառնչությունների շրջանակում սրբի պաշտամունքի քննությունը լիովին համապատասխանում է ազգագրության և կրոնագիտության արդի միջգիտակարգային մոտեցումներին: Հատկապես կարևոր է աշխատանքի կիրառական նշանակությունը՝ վտանգված կամ արդեն կորսված մշակութային ժառանգության փաստագրման և վերարժևորման տեսանկյունից, տպավորիչ ու օգտակար է ատենախոսության «Հավելվածը»:

Ատենախոսությունը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից (տեքստային աղյուսակներ, լուսանկարներ, քարտեզներ):

Առաջին գլուխը («Երուսաղեմը և նահատակների պաշտամունքը. Ս. Ստեփանոս Նախավկայի պաշտամունքի ու համաքրիստոնեական նշանակության ձևավորու-մը») հիմնավոր կերպով վերականգնում է Ս. Ստեփանոսի պաշտամունքի ձևավորման վաղքրիստոնեական աստվածաբանական և պատմական նախադրյալները՝ հենվելով առաջին հերթին «Գործք Առաքելոց»-ի վրա, ինչպես նաև քննում է 415 թ.

մասունքների հայտնության դերը հայկական «սրբազան լանդշաֆտի» ընդարձակման և Ս. Ստեփանոսի պաշտամունքի տարածման գործում: Երկրորդ գլուխը («Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարը հայկական պաշտոնական և ժողովրդական քրիստոնեությունում»)՝ ատենախոսության առանցքային մասերից մեկը, ուսումնասիրում է սրբի կերպարի տեղայնացումն ու հայկականացումը՝ միջնադարյան պատմագրության և հարուստ վիմագրական նյութի հիման վրա՝ իրականացնելով Ս. Ստեփանոսի անվամբ վանքերի, եկեղեցիների և մատուռների առաջին համակողմանի քարտեզագրումը գրեթե ողջ պատմական Հայաստանի տարածքում, ինչպես նաև բացահայտում է սրբի ֆունկցիոնալ տիպաբանությունը ժողովրդական պատկերացումներում: Երրորդ գլուխը («Ս. Ստեփանոսը հայ գրականությունում, բանահյուսությունում, պատկերագրությունում եվ անձնանուններում») վերլուծում է սրբի կերպարի արտացոլումը միջնադարյան գրականության (շարական, տաղ, գանձ), պատկերագրության և հայկական անձնանունների համակարգում:

Ատենախոսության մեջ առաջին անգամ իրականացվել է Ս. Ստեփանոսի անվամբ սրբավայրերի (ավելի քան 260) համալիր աշխարհագրական քարտեզագրում՝ գրավոր սկզբնաղբյուրների, վիմագրական տվյալների և դաշտային ազգագրական նյութերի համադրմամբ: Ստեղծվել և համակարգվել է ազգագրական տվյալների շտեմարան՝ վերաբերող պաշտամունքի արդի դրսևորումներին, ինչը ինքնին կարևոր գիտական ներդրում է և գիտական հիմք է նաև հետագա հետազոտությունների, այլ հետազոտողների համար: Համոզիչ կերպով վերհանված է կանոնական (եկեղեցա-դավանաբանական) և ժողովրդական-բանավոր շերտերի փոխազդեցության մեխանիզմը, մասնավորապես՝ սրբի «գործառութային» վերաիմաստավորումը որպես բժշկության, բարեկեցության և բնական տարերքների հովանավոր: Աշխատանքն աչքի է ընկնում աղբյուրագիտական լայն հենքով՝ ընդգրկելով միջնադարյան մատենագրական տվյալներ, վիմագրություն, 19–20-րդ դդ. ազգագրական նկարագրություններ և ատենախոսի սեփական դաշտային նյութերը, ինչը վկայում է հեղինակի մասնագիտական հասունության մասին:

Վերը նշվածին զուգահեռ՝ անհրաժեշտ եմ համարում ներկայացնել որոշ առաջարկներ ու հարցեր, որոնք, կարծում եմ, կնպաստեն թեմայի հետագա մշակմանը.

Ա. Աշխատանքի արժեքը էլ ավելի կմեծանար, եթե Ս. Ստեփանոսի պաշտամունքի հայկական դրսևորումները ավելի հետևողականորեն համեմատվեին բյուզանդական, ասորական, վրացական և այլ արևելյան քրիստոնեական ավանդույթների հետ. ատենախոսությունում նման զուգահեռներ հիշատակվում են հպանցիկ:

Բ. Հարց է առաջանում՝ որքանո՞վ է հայկական «սարկավագական հովանավորության» մոդելը եզակի, թե՞ ունի զուգահեռներ այլ արևելյան եկեղեցիներում:

Գ. Ցանկալի կլիներ «արդի պրակտիկաներ» եզրույթի ժամանակագրական և բովանդակային սահմանները ավելի ամողջական ու հստակեցված տեսնել, այն է ավելի հստակ ներկայացվեր, թե որ ժամանակահատվածն է հեղինակը դիտարկում որպես «արդի» և ինչ չափանիշներով է առանձնացվել ավանդական ու նոր ձևավորված պաշտամունքային պրակտիկաների սահմանագիծը:

Դ. Ս. Ստեփանոսի պաշտամունքին նվիրված սրբավայրերի աշխարհագրական բաշխվածության վերլուծության ընթացքում (հատկապես Սյունիքի, Արցախի և Վասպուրականի գոտիների համեմատության մասով) օգտակար կլիներ ատենախոսության մեջ ավելի հստակ տեսնել ու լսել ատենախոսի կարծիքը հետևյալ հարցի շուրջ. կարո՞ղ էր արդյոք Ս. Ստեփանոսին նվիրված սրբավայրերի առատությունը պայմանավորված լիներ այդ սրբավայրերի կառուցման ժամանակի, այն է կոնկրետ դարերի պատմական համատեքստով, հայ-իսլամական կոնտակտային գոտիների առկայությամբ, և, առհասարակ, հասկանալ, թե ինչու են հատկապես վերը նշված այդ երեք պատմական շրջաններում, նաև Նախիջևանում, այդքան շատ Ս. Ստեփանոսին նվիրված սրբավայրերը:

Ե. Ատենախոսության մեջ առկա են նաև ատենախոսության բուն նպատակից որոշակի շեղվող հատվածներ, մասնավորապես ալբանական եկեղեցի կառուցելու փորձերի քննությունը (էջ 3), պավլիկյան շարժման մասին շատ ուսանելի, բայց ատենախոսությանը լոկ հպանցիկ առնչվող հատվածը (էջ 72-74), որոնք սակայն ի ցույց են դնում քննվող թեմային առնչվող ու անգամ թեմայից դուրս գտնվող տեղեկույթների՝ ատենախոսի լավատեղյակությունը:

Վերոնշյալ դիտողությունները սկզբունքային բնույթ չունեն և չեն նվազեցնում կատարված աշխատանքի գիտական արժեքը, այլ ուղղված են միայն թեմայի հետագա մշակմանը:

Այսպիսով կարող եմ փաստել, որ Լիանա Ավետիսյանի ատենախոսությունն ամբողջական, աղբյուրագիտորեն հիմնավորված և մեթոդաբանորեն հասուն հետազոտություն է, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն հայագիտության և կրոնագիտության համար: Ատենախոսության արդյունքները բավարար չափով արտացոլված են հեղինակի հրապարակումներում, ատենախոսության մեջ ու սեղմագրում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ ատենախոսի «Ս. Ստեփանոս Նախավկան հայ կրոնական տեքստերում, ժողովրդական պատկերացումներում և արդի պրակտիկաներում» ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների համար սահմանված պահանջներին, և, համապատասխանաբար, Լիանա Գագիկի Ավետիսյանն արժանի է Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հայկ Երջանիկի Հակոբյան, պ.գ.թ., ավագ գիտաշխատող

Մատենադարան. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ; Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Պաշտոնական ընդդիմախոս Հայկ Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀԱԻ գիտական գծով փոխտնօրեն, բ.գ.թ. Տորք Սամվելի Դալալյան

15.07.2026